



ԱՄՆ Արդարադատության Նախարարություն

Ներգաղթյալների և Աշխատողների Իրավունքների Բաժին

ԱՄՆ Արդարադատության Նախարարություն

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՆ ՓՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ 1-9 Ձև

Յուրաքանչյուր ոք, ԱՄՆ – ում աշխատանքի անցնելիս, պետք է լրացնի [Form I-9](#) (1-9 Ձևը), որն իրենից ներկայացնում է կառավարության ձև, ինչը կոչված է հաստատելու աշխատողների ինքնությունը և աշխատանքի իրավունքը: Այս թռուցիկը կօգնի քաղաքական ապաստան փնտրողներին և փախստականներին լրացնել 1-9 Ձևը և տեղեկանալ իրենց իրավունքների մասին: Գործատուները, ովքեր խտրականություն կդնեն Ձեր քաղաքացիության կամ ազգային ծագման հիմքի վրա, կարող են խախտել Ներգաղթի և Քաղաքացիության մասին օրենքի որոշ դրույթներ: Այս հակա-խտրականության մասին օրենքը ամրագրված է [8 U.S.C. § 1324b](#) - ում և կանոնակարգող [28 C.F.R. Part 44](#) (օրենքի 28 C.F.R. Part 44) բաժնում:

1-9 Ձևի Բաժին 1-ը ներկայացնում է տեղեկություն Ձեր մասին:

Լրացրե՛ք Ձեր անունը և այլ տեղեկություն Ձեր մասին Բաժին 1-ում: Դուք կարող եք խնդրել որևէ մեկին օգնել Ձեզ լրացնել այս բաժինը: Դուք պետք է նշեք այն դաշտը, որը ցույց է տալիս Ձեր աշխատանքային իրավունք ունենալու կարգավիճակը: Փախստականներն ու քաղաքական ապաստան փնտրողներն համարվում են «օտարերկրացիներ ովքեր իրավասու են աշխատել», այսպիսով, ստուգեք այս դաշտը: Այդ դաշտի կողքին կա ժամկետը լրացնելու դաշտ: Քանի որ Ձեր աշխատանքի իրավունքը ժամանակավոր է, այդ դաշտում գրեք «N/A» (ինչը նշանակում է «ոչ կիրառելի»): Բաժին 1-ը լրացնելու համար ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ [Form I-9 instructions](#) (Ձև I-9 հրահանգներում) կամ զանգահարելով [Immigrant and Employee Rights Section \(IER\)](#) (Ներգաղթյալների և Աշխատողների Իրավունքների Բաժին) կամ [U.S. Citizenship and Immigration Services](#) (ԱՄՆ Քաղաքացիության և Ներգաղթի Ծառայություն) (USCIS):

1-9 Ձևի Բաժին 2-ում Դուք պետք է Ձեր գործատուին ներկայացնեք փաստաթղթեր, որոնք կհաստատեն Ձեր ինքնությունը և աշխատանքի թույլտվությունը:

1-9 Ձևը ունի երեք փաստաթղթերի ցանկ, որոնք կարող եք ներկայացնել–[List A](#) (Ցանկ A) (Ձեր ինքնությունն ու աշխատանքի թույլտվությունը հաստատող փաստաթղթեր), [List B](#) (Ցանկ B) (Ձեր ինքնությունը հաստատող փաստաթղթեր) և [List C](#) (Ցանկ C) (Ձեր աշխատանքի թույլտվությունը հաստատող փաստաթղթեր): Դուք պետք է Ձեր նախընտրությամբ Ձեր գործատուին ներկայացնեք Ցանկ A –ի փաստաթղթերը կամ Ցանկ B-ի և Ցանկ C –ինը միասին: [Form I-9 instructions](#) և [regulations](#) (1-9 Ձևի հրահանգների և կանոնակարգերի) համաձայն, 1-9 Ձևի համար ընդունելի են նաև որոշակի փաստաթղթեր, որոնք ընդունված են

որպես ստացական, տարբեր ժամանակների համար: 1-9 Ձևի պահանջների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ կապ հաստատելով IER-ի կամ USCIS-ի հետ և 8 U.S.C. § 1324a(b)(1)(A)-ում:

Դուք իրավունք ունեք ընտրել այն վավեր փաստաթղթերը, որոնք ցանկանում եք ներկայացնել: Ձեր գործատուն իրավունք չունի Ձեզանից պահանջել հատուկ փաստաթղթեր հիմնավելով Ձեր քաղաքական ապաստարան փնտրելու կամ փախստականի կարգավիճակի կամ Ձեր ազգային հատկանշիկության հիմքի վրա և եթե որևէ գործատու պահանջի նմանօրինակ փաստաթղթեր կհամարվի օրինախախտ: Օրենքի այս մասը ամրագրված է 8 U.S.C. § 1324b(a)(6)-ում:



Օրինակ, թեև Դուք կարող եք ունենալ Աշխատանքի թույլտվության հավաստագիր I-766 (EAD), բայց Դուք կարող եք որոշել դրա փոխարեն ներկայացնել այլ փաստաթղթեր, ինչպիսիք են Պետական Նույնականացման քարտ (B Ցանկի փաստաթուղթ) և Անսահմանափակ Սոցիալական Ապահովության քարտ (Ցանկ C փաստաթուղթ): Տեղեկացե՛ք փաստաթղթեր ընտրելու մասին Ձեր իրավունքների մասին ավելի մանրամասն այցելելով [IER](#):

Դուք կարող եք ունենալ Ձև I-9-ի մի քանի տեսակի վավեր փաստաթղթեր:

Դուք կարող եք I-9 Ձևի համար ներկայացնել I-94 քարտը: Դուք կարող եք կա մ ստանալ Ձեր I-94 քարտը, կա մ տպել Ձեր I-94 Ձևը [Customs and Border Protection](#) (Մաքսային եւ սահմանային պաշտպանություն) կայքից:

Եթե Դուք փախստական եք, [your I-94 is a receipt](#) (Ձեր I-94 անդորրագիրը) հանդիսանում է A Ցանկի փաստաթուղթ և վավեր է 90 օր սկսած Ձեր աշխատանքային աքաջին օրից: 90 օր հետո Դուք պետք է ներկայացնեք կա մ EAD, կա մ B Ցանկի որևէ այլ փաստաթուղթ Անսահմանափակ Սոցիալական Ապահովության քարտի հետ միասին: Ավելի մանրամասն տեղեկատվություն փախստականների I-94-ի մասին կարող եք ստանալ դիմելով IER և 8 C.F.R. 274a.2(b)(1)(vi)(C)-ում:

Եթե Դուք քաղաքական ապաստան եք փնտրում, կարող եք օգտագործել Ձեր I-94-ը որպես անժամկետ [a permanent List C document](#) (C Ցանկի մշտական փաստաթուղթ):

Քաղաքական ապաստան փնտրողները և փախստականները իրավասու են EAD-ի համար: Եթե Ձեր EAD-ի վավերականության ժամկետը լրացել է և Դուք դիմել եք այն նորացնելու համար, կարող եք աշխատել առկա EAD-ով: 180 օր Ձեր EAD-ի վավերականության ժամկետը լրանալուց հետո, Դուք կարող եք ներկայացնել Ձեր EAD-ը I-797C ծանուցումով ցույց տալով, որ կառավարությունը ստացել է Ձեր EAD-ը նորացնելու դիմումը: Մանրամասն տեղեկությունների համար գանգահարել IER:

Դուք կարող եք նաև աշխատանքի համար ներկայացնել անդորրագրեր [lost, damaged or stolen](#) (կորած, փաստված կամ գողացված) փաստաթղթերի մասին, ոչ ուշ քան երկու օրվա ընթացքում:

Երբ Դուք ներկայացնեք Ձեր փաստաթղթերը I-9 Ձև լրացնելու համար, գործատուն իրավունք ունի Ձեզանից կրկին փաստաթղթեր պահանջել միայն սահմանափակ հանգամանքներում: Կանոնակարգերը, երբ գործատուն պետք է կրկին փաստաթղթեր պահանջի, ամրագրված է [Handbook for Employers](#) (Գործատուների Համար Ձեռնարկում) և 8 C.F.R. 274a.2(b)(1)(vii)-ում:

Եթե Դուք ներկայացրել եք Ձեր EAD-ը Բաժին 2-ի համար, ապա Ձեր գործատուն կցանկանա տեսնել մեկ այլ փաստաթուղթ մինչ Ձեր EAD-ի վավերականության ավարտը, որպեսզի լրացնի I-9 Ձևի Բաժին 3-ը:

Դուք կարող եք ընտրել ներկայացնել կա մ A Ցանկի վավերական փաստաթուղթ, կա մ C Ցանկի որևէ փաստաթուղթ, ինչպես օրինակ Անսահմանափակ Սոցիալական Ապահովության քարտն է: Դուք կարող եք նախընտրել ներկայացնել նոր EAD, բայց դրա կարիքը չկա:

Եթե Դուք ներկայացրել եք Անսահմանափակ Սոցիալական Ապահովության քարտ Բաժին 2-ի համար որպես աշխատանքի թույլտվության ապացույց, և վավերականության ժամկետի դաշտում մուտքագրել եք «N/A», Բաժին 1-ում «Օտարերկրացի իրավասու աշխատելու», ապա Ձեր գործատուն այլևս կարիք չի ունենա Ձեզանից կրկին փաստաթղթեր պահանջել: Գործատուները, ովքեր կպահանջեն փաստաթղթեր հիմնվելով Ձեր քաղաքական ապաստարան փնտրելու կամ փախստականի կարգավիճակի կամ Ձեր ազգային պատկանելիության հիմքի վրա, ինչը չի պահանջվում, կհամարվեն օրինախախտ: Օրենքի այս կանոնակարգման մասին մանրամասն կարող եք տեղեկանալ այցելելով IER և 8 U.S.C. § 1324b(a)(1) or (a) (6)-ում:

Ձեզ պետք չի Ձեր Սոցիալական Ապահովագրության համարը, որպեսզի Դուք սկսեք աշխատել

Եթե Դուք աշխատանքի եք անցնում, բայց դեռ չունեք Ձեր Սոցիալական Ապահովագրության համարը (SSN), [Social Security Administration](#) (Սոցիալական Ապահովագրության Վարչությունը) հայտնում է գործատուին, որ տվյալ աշխատակցին թույլատրվում է աշխատել իր SSN-ին սպասելու ընթացքում:

Ձեր գործատուն պարտավոր է վճարել Ձեզ Ձեր աշխատանքի դիմաց, եթե նույնիսկ Դուք դեռ սպասում եք Ձեր SSN-ին: Արդար Աշխատանքի Նորմերը կանոնակարգող օրենքը, ամրագրված 29 U.S.C. § 201-ում, Ձեզ իրավունք է տալիս վճարվել Ձեր կատարած աշխատանքի դիմաց:

Եթե Դուք չունեք SSN Ձեր աշխատանքի անցնելու պահին, բաց թողեք Բաժին 1-ի, SSN-ի դաշտը: Դա ճիշտ կհամարվի, եթե նույնիսկ Ձեր գործատուն օգտագործում է E-Verify:

| |
|--|
| <p>Ներգաղթյալների և Աշխատողների Իրավունքների Բաժին (IER)</p> <p>1-800-255-7688</p> <p>www.justice.gov/ier</p> <p>Չանգերը կարող են անանուն լինել: Հասանելի են լեզվական ծառայություններ:</p> <p>TTY 1-800-237-2515</p> |
|--|

Այս թռուցիկը չի համարվում վերջնական ներկայացուցչական գործողություն, այն չունի օրինական պարտադիր ուժ և կարող է վերանայվել կամ փոփոխվել վարչության հայեցողությամբ՝ կիրառելի օրենքների համաձայն: Այս թռուցիկը չի սահմանում օրինականորեն կիրառելի պարտականություններ, բացի այն պահանջներից, որոնք պահանջվում են կիրառելի օրենքի, կանոնակարգի կամ պարտադիր դատական նախադեպի պայմաններով: